ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 23.10.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2020/227

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 09.10.2020թ. թիվ 26/26-1/15342-2020 գրությամբ «Ֆրսթշին» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի 05.10.2020թ. թիվ 01/24.3/1800-2020 գրության հիման վրա 09.10.2020թ. թիվ 26/26-1/15342-2020 գրությամբ նախաձեռնել է «Ֆրսթշին» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Ֆրսթշին» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Ֆրսթշին» ՍՊԸ-ի կողմից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

«Ֆրսթշին» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/227 ընթացակարգի շրջանակներում 19.10.2020թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ն (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 05.10.2020թ. թիվ 01/24.3/1800-2020 գրությամբ հայտնել է, որ իր կարիքների համար 2020 թվականի օգոստոսի 05-ին շինանյութի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԲԷՑ-ԳՀԱՊՁԲ-20/38» ծածկագրով գնման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգին հայտ ներկայացրած մասնակից «Ֆրսթշին» ՍՊ ընկերությունը հայտերի գնահատման արդյունքում ճանաչվել է ընտրված մասնակից, սակայն հրաժարվել է Ընթացակարգին հետագա մասնակցությունից, այդ թվում և պայմանագրի կնքման գործընթացից:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/227 ընթացակարգի շրջանակներում 19.10.2020թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՍՑ-ՆԳ-2020/227 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ՍՑ-ՆԳ-2020/227 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1.«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կողմից կազմակերպվել է «ԲԷՑ-ԳՀԱՊՁԲ-20/38» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Ֆրսթշին» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 27.08.2020թ. նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ «Ֆրսթշին» ՍՊԸ-ն Ընթացակարգի 63-րդ և 64-րդ չափաբաժինների մասով ճանաչվել է հաղթող (ընտրված) մասնակից, և որոշվել է

անգործության ավարտից հետո հրավերով նախատեսված կարգով վերջինիս հետ կնքել պայմանագիր:

3. «Ֆրսթշին» ՍՊԸ-ն 25.09.2020թ. «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն Հ. Հարությունյանին ուղղված գրությամբ հայտնել է, որ հրաժարվում է «ԲԷՑ-ԳՀԱՊՁԲ-20/38» ծածկագրով պայմանագիրը կնքելուց:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 09.10.2020թ. թիվ 26/26-1/15342-2020 գրությունը, «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի 05.10.2020թ. թիվ 01/24.3/1800-2020 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց

հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Այսպես, «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կողմից կազմակերպվել է «ԲԷՑ-ԳՀԱՊՁԲ-20/38» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Ֆրսթշին» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 27.08.2020թ. նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ «Ֆրսթշին» ՍՊԸ-ն Ընթացակարգի 63-րդ և 64-րդ չափաբաժինների մասով ճանաչվել է հաղթող (ընտրված) մասնակից, և որոշվել է անգործության ավարտից հետո հրավերով նախատեսված կարգով վերջինիս հետ կնքել պայմանագիր:

«Ֆրսթշին» ՍՊԸ-ն 25.09.2020թ. «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն Հ. Հարությունյանին ուղղված գրությամբ հայտնել է, որ հրաժարվում է «ԲԷՑ-ԳՀԱՊՁԲ-20/38» ծածկագրով պայմանագիրը կնքելուց:

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Ուսումնասիրելով «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կողմից Ընթացակարգի շրջանակներում ներկայացված հիմքերը, դրանք համադրելով գործում առկա ապացույցների հետ՝ արձանագրում եմ, որ «Ֆրսթշին» ՍՊԸ-ն թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի խախտում, քանի որ ընտրված մասնակից ճանաչվելուց հետո՝ 25.09.2020թ. Պատվիրատուին ուղղված գրությամբ, հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը որոշում է կայացնում մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անձը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 09.10.2020թ. թիվ 26/26-1/15342-2020 գրությամբ «Ֆրսթշին» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Ֆրսթշին» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**